ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

Տնտեսական բնույթի միջկառավարական համաձայնագրերի շարքում կարևոր դեր են խաղում նաև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագրերը, որոնցով կողմերին հնարավորություն է ընձեռնվում իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա երկու երկրների միջև իրականացնել տնտեսական ծրագրեր և այլ գործունեություն

Այդ համաձայնագրերը թույլ են տալիս ստեղծել և զարգացնել երկարատև տնտեսական հարաբերություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագրի ստորագրման նախաձեռնությունը պատկանում է բրազիլական կողմին՝ Բրազիլիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տեխնիկական համագործակցության հետագա զարգացման նպատակով:

Տվյալ Համաձայնագրի ստորագրումը կխթանի տեխնիկական առաջընթացը երկու երկրներում և կնպաստի երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության հիմնադրմանը, տնտեսական կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, գործարար ակտիվության բարձրացմանը:

Համաձայնագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրած արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին և նպատակներին:

Ելնելով վերոհիշյալից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նպատակահարմար է համարում վերոնշյալ Համաձայնագրի ստորագրումը Հայաստանի Հանրապետության կողմից: